

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ

Մամլո հաղորդագրություն

Յուլիսի 6, 2016 թ., Երևան

Հայաստանը ցանցային պատրաստվածությամբ բարելավել է իր դիրքը աշխարհում 2 տեղով՝ զբաղեցնելով 56-րդ հորիզոնականը

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՋՏՖ) Համաշխարհային մրցունակության կենտրոնի գործընկեր կազմակերպություն Հայաստանում, ներկայացնում է ՋՏՖ կողմից հրապարակվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույց 2016»-ի հիմնական արդյունքները:

Չեկույցի հիմքում ընկած է **ցանցային պատրաստվածության համաթիվը**, որը ցույց է տալիս երկրների տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումներին մասնակցելու և դրանցից օգտվելու պատրաստվածության աստիճանը, ինչն էլ նպաստում է մրցունակության բարձրացմանը:

ՋՏՖ-ի գնահատականներով Սինգապուրը, Ֆինլանդիան և Շվեդիան շարունակում են առաջատար դիրքեր զբաղեցնել ցանցային պատրաստվածության վարկանիշով: Վարկանիշային առաջին հնգյակը եզրափակում են Նորվեգիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Չեկույցում գնահատվել է 139 երկրների ՏՏ մրցունակությունը:

Հայաստանը ցանցային պատրաստվածության ցուցիչով աշխարհում 56-րդն է 139 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 2 տեղով:

ԱՊՅ երկրները, Ուկրաինան և Վրաստանը դրական տեղաշարժ են արձանագրել՝ բացառությամբ Ռուսաստանի, որի դիրքը նույնն է մնացել: Առավել էական բարելավում է արձանագրվել Ուկրաինայում (+7): Ադրբեջանը բարելավել է իր դիրքը 4 տեղով՝ զբաղեցնելով 53-րդ հորիզոնականը, իսկ Վրաստանը՝ 2 տեղով և զբաղեցրել 58-րդ հորիզոնականը:

Երկիր	Ցանցային պատրաստվածություն	
	2016 թ. վարկանիշ	Փոփոխությունը 2015 թ. համեմատ
Ղազախստան	39	+1
Ռուսաստան	41	0
Ադրբեջան	53	+4
Հայաստան	56	+2
Վրաստան	58	+2
Ուկրաինա	64	+7
Ղրղզստան	95	+3
Տաջիկստան	114	+3

ՀՏՖ-ի գնահատականներով Հայաստանի ՏՏՏ ոլորտում առավել ուշագրավ առավելություններն ու թերություններն են.

Ամենաեական առավելությունները	Տեղ	Ամենաեական թերությունները	Տեղ
Ջեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցություն	1	Պայմանագրերի կիրարկման գործընթացներ, քանակ	134
Բջջային ցանցի ծածկույթ	1	Աշխատակազմի վերապատրաստման մակարդակ	116
Ձեռնարկության հիմնման գործընթացներ, քանակ	3	Կառավարման դպրոցների որակ	115
Մեծահասակների գրագիտության մակարդակ	8	Իրավական դաշտի արդյունավետությունը պետ. կարգավորումները վիճարկելու համար	115
Ձեռնարկության հիմնման տևողություն, օր	9	Ընկերությունների կողմից տեխնոլոգիաների յուրացում	113
Հարկերի ընդհանուր դրույթ	11	Առաջատար տեխնոլոգիաների պետական գնումները	108

Ընդհանուր առմամբ, Հայաստանի գնահատականները զգալիորեն բարձր են ցածրից միջին եկամուտներ ունեցող երկրների արդյունքների համեմատ:

Ուշագրավ առավելություններից է հեռախոսային կապի և համացանցի ոլորտում մրցակցության և բջջային կապի ծածկույթի բարձր մակարդակը: Հայաստանի հիմնական ուժեղ կողմերից են շարունակում մնալ ձեռնարկությունների գրանցման հետ կապված հիմնական գործընթացների դյուրինությունը, ինչպես նաև բարձր գրագիտությունը և հարկերի ընդհանուր ցածր դրույթը:

Ամենախնդրահարույց ոլորտներից են պայմանագրերի կիրարկումը, աշխատակազմի վերապատրաստման մակարդակը և կառավարման դպրոցների ցածր որակը: Առաջատար տեխնոլոգիաների պետական գնումների և բիզնեսի կողմից դրանց յուրացումը շարունակում են տեղ գրավել Հայաստանի ուշագրավ թերությունների շարքում:

Հայաստանի դիրքը գրեթե չի փոփոխվել ըստ բաղադրիչների՝ բացառությամբ պատրաստվածության բաղադրիչի 1 տեղով բարելավման:

Հայաստանը հիմնականում բարելավել է դիրքը մատչելիության հենասյունով՝ լայնաշերտ ինտերնետի և բջջային կապի կանխավճարային սակագների նվազման արդյունքում:

Ցանցային պատրաստվածության ցուցչի բաղադրիչները և Հայաստանի գնահատականները ներկայացված են ստորև.

		Վարկանիշ 2016թ.	Փոփոխությունը 2015թ. նկատմամբ
1. Միջավայրի բաղադրիչ		78	0
Հենասյուն 1.	Քաղաքական և կարգավորիչ միջավայր	116	-9
Հենասյուն 2.	Գործարար և նորարարական միջավայր	50	+3
2. Պատրաստվածության բաղադրիչ		43	+1
Հենասյուն 3.	Ենթակառուցվածք	61	-4
Հենասյուն 4.	Մատչելիություն	18	+13
Հենասյուն 5.	Զմտություններ	51	+3
3. Օգտագործման բաղադրիչ		65	0
Հենասյուն 6.	Անհատների օգտագործում	69	+5
Հենասյուն 7.	Բիզնեսի օգտագործում	101	-1
Հենասյուն 8.	Պետական օգտագործում	46	-1
4. Ազդեցության բաղադրիչ		54	0
Հենասյուն 9.	Տնտեսական ազդեցություն	56	-6
Հենասյուն 10.	Սոցիալական ազդեցություն	56	+2

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն և «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը հանդիսանում է «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը:

Կենտրոնի մասնագիտացումը ներառում է տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրներից մինչև բիզնես զարգացման անհատական հիմնախնդիրներ: Կենտրոնն ուսումնասիրում է տնտեսության և հասարակության զանազան ոլորտներ՝ հարցումների, ֆոկլուսային խմբերի քննարկումների, վերլուծությունների, առաջնային և երկրորդային հետազոտությունների միջոցով:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկեր կազմակերպությունն է Հայաստանում:

«Ի-Վի Քոնսալթինգը» գործարար խորհրդատվական ընկերություն է, որն աջակցում է մրցունակության և նորարարության հաջորդ՝ ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

Մելիք-Ադամյան 2/1
 Երևան 0010
 Հեռ. +37410 546434
 Էլ-փոստ. info@ev.am
www.ev.am
www.evconsulting.com